



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 66-Ա
03 ՀՈՒՆԻՍԻ 2021թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 0.1693 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն, Կապան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 17-ի 31-Ա որոշումներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում համաձայն հավելվածի կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերից (կադաստրային ծածկագրեր 09-001-0118-0080 0.00881 հա, 09-001-0118-0073 0.00178 հա, 09-001-0118-0089 0.00251 հա) 0.0131 հեկտար հողամասը և իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերից (կադաստրային ծածկագրեր 09-001-0118-0067) 0.1562 հեկտար հողամասը (հատված ԲԱ-4) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» հողեր գործառնական նշանակությամբ:

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ (10)

- ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
- ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ
- ԲՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
- ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
- ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
- Դեմ (0)
- Ձեռնպահ (0)
- ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

- ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
- ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
- ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



2021թ. հունիսի 03
ք. Կապան